Պարոնը վերջին անգամ նայեց գերեզմանի վրայ, կամենում էր տիկնոջ հետ հեռանալ դէպի վանքը, բայց մանուկներից մէկը կանգնեցրեց նրան, հարցնելով.

— Հայրիկ, ա՞յդ է քո բարեկամի գերեզմանը, որի մասին ճանապարհին միշտ խօսում էիր մեզ հետ...

— Այդ է... — պատասխանեց հայրը տխուր ձայնով:

— Ախ ինչո՞ւ են այդպէս թաղել... — հարցրեց մանուկը արտասուալի ձայնով: — Ո՞վ գիտէ, նա երեխաներ չունե...

— Չունէ՛... — ասաց հայրը:

Նրանք խօսում էին անգղիերէն:

Մանուկը դարձաւ դէպի իր քոյրը եւ եղբայրները.

— Անոյշ, Խորէն, Տիգրան, հայրիկի բարեկամը երեխաներ չունէ, գնանք ծաղիկներ հաւաքենք նրա գերեզմանի համար:

Մանկահասակ խումբը վազեց դէպի շրջակայ վայրերը: Բարձրահասակ տիկինը, մայրական ջերմ գորովը աչքերում, նայում էր նրանց ետեւից:

Ամառային այդ ժամանակի տապերը ծաղիկներ չէին թողել, խոտերն անգամ չորացել էին: Միայն այրուած քարքարուտների մէջ վառւում էր դեղին գոյնով եւ ծիրանեգոյն «անթառամը» իսկ ժայռերի ծերպերից աճել էր հոտաւէտ օշինդրը, սպիտակ թաւիշի նման փափուկ տերեւներով: Տեղ-տեղ բուրում էր վայրենի կոտեմը իր սուր, կծու հոտով: Մանուկները վրայ ընկան քաղելու: Մի քանի րոպէից յետոյ, երեք եղբայրները եւ մի քոյրը, չորս կողմից բռնած բերեցին մի մեծ, ծանր պսակ, հիւսուած էր անթառամ ծաղիկներից եւ զանազան վայրենի բոյսերից եւ դրեցին բարեկամի գերեզմանի վրայ եւ փոքրիկ ձեռիկները կուրծքի վրայ փակած, նրանց ջերմեռանդ երեսիկները խփած աչքերով դարձան դէպի երկինքը... Այդ վսեմ հանդիսաւոր րոպէն այնքան սրտաշարժ, այնքան սուրբ էր, որպէս երեխայի մաքուր զգացմունքը: Հայրը եւ մայրը թաշկինակները տարան դէպի իրենց աչքերը: Իր արտասուքը չկարողացաւ զսպել եւ երիտասարդ Ռաշիդը, նա նոյնպէս սկսեց լալ: Այդ սովորութիւնը ունէին մանուկները, երբ Նիւ-եօրքում ամէն շաբաթ այցելում էին իրանց մեծ քրոջ գերեզմանին, զարդարում էին ծաղիկներով եւ աղօթում էին այնտեղ:

Պարոնը դարձաւ դէպի գերեզմանը ցոյց տոող երիտասարդը, խնդրեց, որ իրան առաջնորդէ, տանելու հանգուցեալի խուցը: